

**ՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՍՊԻՑ ԾՈՎԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1991-2004 ԹԹ.)**

Ս. Ս. ԱՐՐԱՅԱՍՅԱՆ

Կասպյան հայրստ պաշարների արդյունահանման հսկայածավալ նախագծերը, ինչպես նաև տրանսպորտային միջանցքների ստեղծման հեռանկարները էականորեն կարևորեցին կովկասյան, իսկ ավելի լայն իմաստով՝ Կովկաս-Կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղական նշանակությունը:

Ներկայում կասպյան հիմնախնդիրների շարքում ծովի իրավական կարգավիճակը կարևորագույններից է: Դա պատահական չէ, քանի որ կարգավիճակի միջազգայնորեն ճանաչումը պետք է դառնա տարածաշրջանի խնդիրների լուծման անհրաժեշտ նախապայման:

Կասպիականի կարգավիճակի հարցը նախապատմություն ունի: Ջրային այդ ավազանը միշտ եղել է սահմանակից պետությունների հավակնությունների առարկա:

Մինչև Խորհրդային Միության փլուզումը ծովը ջրային փակ ավազան էր ԽՍՀՄ-ի և Իրանի միջև, ուստի բացառվում էր այդ տարածաշրջանի գործերին արտաքին ուժերի որևէ միջամտություն: Սակայն Խորհրդային Միության փլուզումից հետո արմատապես փոխվեցին կասպյան տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրողությունները: Նորանկախ մի շարք պետություններ՝ Ալյբերջանը, Թուրքմենստանը և Ղազախստանը, բնականաբար դարձան ծովի պաշարների պահանջատեր: Հենց դա էլ ծնեց ջրային այդ ավազանի իրավական կարգավիճակի խնդիրը:

Այսպիսով, Կասպից ծովը դարձավ մերձկասպյան հինգ պետությունների կովախընձոր: Պայքարի մեջ ներգրավվեցին նաև միջազգային ուժեր՝ առաջարկելով կասպիական ածխաջրածնային հարուստ պաշարների արդյունահանման, ինչպես նաև տրանսպորտային միջանցքների ստեղծման հսկայածավալ նախագծեր:

Ռուսաստանը ԽՍՀՄ անմիջական իրավահաջորդն է և 1921 և 1940 թթ. Իրանի հետ կնքած պայմանագրեր ունի: Փաստորեն Ռուսաստանը մերձկասպյան պետություններին առաջարկում էր պայմաններ, որոնց համաձայն նրանք մինչև նոր պայմանագրի ստորագրումը Կասպից ծովում որևէ գործողություն չէին կարող իրականացնել առանց Ռուսաստանի և Իրանի հետ համաձայնեցնելու:

Բնականաբար, Ռուսաստանը փորձում էր ամեն կերպ հակազդել տարածաշրջանում իր շահերի դեմ ցանկացած ոտնձգության: Այդ պայմաններում կարևորվում էին Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցի պարզաբանումը և հստակեցումը, մասնավորապես նոր Խորհրդային Միության և Իրանի միջև կնքված պայմանագրերը այլևս չէին համապատասխանում նոր իրողությանը¹: Ավելին, հետխորհրդային մերձկասպյան բոլոր հանրապետությունները հանդես էին եկել հայտարարությամբ, թե չեն ճանաչում հիշյալ պայմանագրերը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են Կասպից ծովի կարգավիճակին²:

Մինչդեռ Ռուսաստանը, դիմակայելով այդ տեսակետին, բերում էր այն փաստարկը, որ նորանկախ հանրապետությունները, 1991թ. դեկտեմբերի 21-ին ստորագրելով Ալմա-Աթայի հռչակագիրը, իբր պարտավորվել են պահպանել Խորհրդային Միության

¹ Տե՛ս S. Vinogradov, P. Wouters, The Caspian sea current legal problems, 1995, էջ 13:

² Տե՛ս V. Gizzatov, The legal status of the Caspian Sea, "Central Asia and the Caucasus review", 1995, vol. 4, № 10, էջ 130:

ստորագրած միջազգային բոլոր փաստաթղթերը, ուստի և պետք է հավատարիմ մնան խորհրդա-իրանական պայմանագրերին³:

Սակայն միանգամայն ակնհայտ էր, որ Կասպից ծովում իրավական նախկին կարգավիճակի ամրապնդմամբ իր ազդեցությունը պահպանելու Մոսկվայի քայլերը հակասում էին մերձկասպյան նորանկախ պետությունների քաղաքական ու տնտեսական շահերին, որոնք ձգտում էին ազատվել ռուսական ազդեցությունից:

Մերձկասպյան հանրապետությունների շարքում առաջինը ամենակտիվ գործունեություն ծավալեց Ադրբեջանը⁴ և սկսեց շահագործել կասպյան նավթահանքերը:

Հարկ է նշել, որ 1994թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանն արևմտյան նավթային խոշոր ընկերությունների հետ Կասպից ծովի շելֆում նավթահանքերի շահագործման պայմանագիր ստորագրեց⁵: Ահա թե ինչու Ռուսաստանը նույնիսկ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային տեղեկացրեց, որ Կասպից ծովում ցանկացած միակողմ գործողություն կհամարվի անօրինական: Ռուսաստանն «իրեն իրավունք կվերապահի համապատասխան միջոցներ ձեռնարկել խախտված իրավակարգը վերականգնելու և միակողմ գործողությունների հետևանքները վերացնելու համար»⁶:

Կասպյան հանրապետությունների սերտ գործակցությունը ԱՄՆ-ի հետ չէր կարող չառաջացնել Կրեմլի դժգոհությունը, որն անընդունելի էր համարում արտաքին ուժերի միջամտությունը տարածաշրջանի գործերին: ԱՄՆ-ում Ռուսաստանի նախկին դեսպան Վլադիմիր Լուկինն այսպես է ձևակերպել Մոսկվայի ռազմավարությունը. «Ռուսաստանը պետք է սահմանափակի արտաքին ինտերվենցիան Կասպից ծովում»⁷: Մոսկվան ոչ տարածաշրջանային ուժերի մուտքը խոչընդոտելու համար՝ Կենտրոնական Ասիայի և Կովկասի տարածաշրջանը, որը Ռուսաստանի ավանդական ազդեցության ոլորտն էր, հայտարարեց որպես «մերձավոր արտասահման»⁸: Իսկ այնուհետև, 1994թ. աշնանից փորձելով դիմակայել կասպիական ավազանում ներդրումներ իրականացնող արևմտյան նավթային ընկերություններին, Կասպից ծովը հայտարարեց որպես փակ ջրավազան, որի նկատմամբ իրավունքներ ունեն միայն ավիամերձ պետությունները, և որի տարածքում արգելվում է օտարերկրյա պետությունների գործունեությունը⁹:

Միանգամայն ակնհայտ էր, որ այդ միջոցառմամբ Ռուսաստանը նպատակ ուներ իր հսկողության տակ պահել Կասպից ծովի պաշարների շահագործման գործընթացը:

Ուստի չցանկանալով կորցնել ծովի ողջ տարածքի վերահսկողությունը՝ Մոսկվան առաջ քաշեց ծովի և պաշարների բաժանման փոխընդունելի գաղափար:

Դեռևս 1995թ. Թեիրանում կայացած խորհրդակցության ժամանակ Ռուսաստանը ներկայացրեց համաձայնագրի իր նախագիծը, որի հիմքում Կասպից ծովի՝ որպես ընդհանուր սեփականության գաղափարն էր:

Ռուսաստանի արտգործնախարարությունը հայտարարեց, որ «Կասպից ծովը, իր իրավական կարգավիճակի համաձայն, չի պատկանում մերձկասպյան պետություններից ոչ մեկին, բոլորն էլ օգտագործման հավասար իրավունքներ ունեն: Այդ իրավիճակում մերձկասպյան յուրաքանչյուր պետություն չի կարող հաշվի չառնել կասպիական

³ St' u Mohammad Reza Dabiri, The legal regime of the Caspian Sea, "Central Asia and the Caucasus review", 1995, vol. 4, № 10, էջ 152:

⁴ St' u A. Гущер, Стратегия США в Каспийском регионе // Азия и Африка, 2003, № 5, էջ 16:

⁵ St' u W. Raczka, A sea or lake? The Caspian's long odyssey//Central Asia Survey. USA, June 2000, vol. 19, № 2, էջ 208:

⁶ В. Гусейнов. Каспийская нефть, М., 2002, с. 169.

⁷ "Timestown Monitor", October 29, 1993, p. 149.

⁸ St' u Harmnes Adomit, Russia as a great power in world affairs, "International affairs", № 71, 1995, էջ 15:

⁹ St' u Муса Аль Реза Вахиди, Внешняя политика России на Каспийском море, "Аму Дарья", Весна, 2001, էջ 57:

հարևանների իրավունքները և շահերը, պետք է իր գործունեությունն իրականացնի այնպես, որ չվնասի մյուսներին»¹⁰: Իսկ Կասպից ծովի վերաբերյալ 1995թ. հոկտեմբերի 30-ի ռուս-իրանական հայտարարության մեջ ասվում էր, թե բոլոր հարցերը, որոնք կապված են Կասպից ծովի, այդ թվում նաև իրավական կարգավիճակի որոշման հետ, «լուծվում են ամենաբարձր պետությունների փոխհամաձայնությամբ»¹¹:

Հարկ է նշել, որ Կասպից ծովն աշխարհում աղի ամենախոշոր ջրային տարածքն է, որը ելք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս¹² ո՛չ ուրիշ ծովերի և նեղուցների, ո՛չ էլ գետերի միջոցով, թեև գետերի միջև արհեստական ջրանցքով կարող է հասնել Համաշխարհային օվկիանոս: Գետերը, սակայն, ծովային տարածությունների թվին չեն դասվում¹³ և միջազգային ծովային իրավունքի օբյեկտ չեն¹⁴: Ուստի ծովային իրավունքի՝ ՄԱԿ-ի 1982 թվականի կոնվենցիան չի տարածվում նրա վրա: Քանի որ Կասպիցը փակ ջրավազան է, նրա վրա չի տարածվում միջազգային ծովային իրավունքը¹⁵: Փակ ծովի կարգավիճակը չի կարող փոխվել մերձկասպյան այս կամ այն պետության միակողմ գործողություններով, այլ պետք է փոխվի միայն միջազգային իրավունքի նորմերով: Ռուսաստանի արտգործնախարարությունը պնդում էր, որ «միջազգային իրավունքի նորմերը, որոնք մեզ կարտատարներին ղեկավարվել ծովային իրավունքի նորմերով կամ ծովը բաժանել հատվածների, բոլորովին գոյություն չունեն»¹⁶:

Մոսկվայի այդ կոշտ դիրքորոշումը շարունակվեց մինչև 1996 թ.: Արևմտյան նավթային խոշոր ընկերությունների կողմից Ադրբեյջանի շահերի պաշտպանությունը ստիպեց նրան ընկրկել:

Ուստի 1996թ. նոյեմբերի 12-ին Մոսկվան հանդես եկավ նոր առաջարկությամբ, որի էությունը հետևյալն էր. կասպյան ամենաբարձր յուրաքանչյուր պետության համար սահմանել 45 մղոն լայնությամբ բացառիկ տնտեսական գոտի¹⁷, որտեղ հանքային պաշարները պետք է արդյունահաներ միացյալ նավթային ապագա ընկերությունը¹⁸: Այս մասին պաշտոնապես հայտարարեց Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչության նախկին ղեկավար Եվգենի Պրիմակովը¹⁹:

Առաջարկվում էր ծովի կենտրոնական մասի ընդերքի պաշարներն արդյունահանել միասնաբար և այդ նպատակով հիմնել Կասպյան միացյալ նավթային ընկերություն: Նավթարդյունահանման նախագծերի ֆինանսավորման համար Մոսկվան առաջարկում էր ստեղծել առևտրի ու զարգացման կասպիական բանկ, ինչպես նաև հիմնադրել տարածաշրջանային համագործակցության կազմակերպություն՝ վերահսկելու կասպյան նավթային ընկերության գործունեությունը²⁰:

Սակայն այս առաջարկը մերձկասպյան մյուս երկրները մերժեցին: Իրանի ղեկավարությունն արեց 20-մղոնանոց սահմանի վերականգնման, Կասպից ծովի ազգային գոտիների

¹⁰ "Геополитика каспийского региона", под ред. С. С. Жильцова, И. С. Зонна, А. М. Ушкова, М., 2003, с. 74.

¹¹ Նույն տեղում:

¹² Տե՛ս **Ա. Կոэн**, ՇՄԱ: Задачи в сфере защиты безопасности каспийских углеводородов от посягательств Ирана // Центральная Азия и Кавказ. Швеция. 2002. № 1(19), էջ 44:

¹³ Տե՛ս **Վ. Քնաշյան**, Միջազգային իրավունք, Եր., 2002, էջ 321:

¹⁴ Տե՛ս **Կ. Ս. Գադձև**, Геополитика Кавказа, М., 2003, էջ 400:

¹⁵ Տե՛ս "Caspian Oil and Gas Resources"//Conference proceedings, Second International Conference-Tehran, Institute for International Energy Studies. November 7-8, 1998, էջ 5:

¹⁶ **В. Гусейнов**, նշվ. աշխ., էջ 171:

¹⁷ Տե՛ս **Ր. Ի. Դեքմեյան** and **Ի. Ի. Տիմոնյան**, Troubled Waters: The Geopolitics of the Caspian Region. New York, St. Martin's Press, 2001, էջ 23:

¹⁸ Տե՛ս **Michael P. Croissant**, The Caspian Sea status dispute: Azerbaijan perspectives, "Caucasian regional studies", 1998, vol. 3. էջ 16:

¹⁹ Տե՛ս «Деловая неделя», № 30 (258), 8 августа 1997г.:

²⁰ Տե՛ս **Bahman Aghai Diba**, The law and politics of the Caspian Sea in the twenty-first century, Tehran, 2003, էջ 38:

լիակատար բաժանման կամ էլ Իրանին ծովի պաշարների շահագործումից ստացված բոլոր եկամուտների 20%-ի հատկացման առաջարկ²¹:

Ռուսաստանն աստիճանաբար գլխակցեց, որ իր սկզբնական կոշտ դիրքորոշումն անընդունելի է մյուս հանրապետությունների համար, որ դրա հետևանքով հետխորհրդային հանրապետությունները ռուսական ազդեցության ոլորտից հեռանալու ելքեր են փնտրում, իսկ տարածաշրջանում իր ազդեցության թուլացմամբ առաջացած վակուումը մեծ հաջողությամբ փորձում են լցնել արևմտյան տերությունները՝ հիմնվելով իրենց նավթային գերիզոր ընկերությունների վրա²²:

Որպես նոր ոլորեզրված այդ քաղաքականության հետևանք՝ 1996թ. ապրիլին Ալմա-Աթայում Ռուսաստանի և Ղազախստանի նախագահները ստորագրեցին Կասպից ծովի պաշարների օգտագործման շուրջ համագործակցության միասնական հայտարարություն²³: Իսկ 1998թ. հունվարին Ռուսաստանի և Ղազախստանի նախագահները հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ նշելով, որ Կասպից ծովի հարցում փոխհամաձայնություն ենարավոր է միայն ծովի հատակի արդարացի բաժանման դեպքում:

Այսպիսով, Ռուսաստանը համաձայն էր Կասպից ծովի հատակը բաժանել ազգային հատվածների, պայմանով, որ ջրային մակերեսն ընդհանուր լինի կողմերի համար²⁴: Իսկ 1998թ. ապրիլին Ռուսաստանի, Ղազախստանի և Ադրբեջանի պայմանավորվածությամբ որոշվեց Կասպից ծովը կենտրոնից բաժանել ափամերձ հինգ պետությունների միջև: Միաժամանակ այս երեք երկրներն ընդունեցին ծովի օգտակար հանածոների նկատմամբ ափամերձ բոլոր պետությունների սեփականատիրության իրավունքը²⁵:

Այսպիսով, մերձկասպյան հանրապետությունները ստորագրեցին առաջին համաձայնագիրը, ինչը հանդիպեց Իրանի դիմադրությանը: ԻԻՀ արտգործնախարար Քամալ Խարազին հայտարարեց, որ փաստաթուղթը չի կարող իրավագուր համարվել, քանի դեռ այն հավանության չեն արժանացրել մերձկասպյան բոլոր հինգ երկրները:

Ընդհանրացնելով 90-ական թթ. Ռուսաստանի արտաքին քաղաքականության սկզբունքները տարածաշրջանում Կասպից ծովի իրավական կարգավիճակի շուրջ՝ անհրաժեշտ է նշել, որ Ռուսաստանի արտգործնախարարությունն այդ իմաստով հետևողական չէր, բացի այդ՝ Կասպից ծովի հարցում երկիրը չունեի հեռանկարային հստակ դիրքորոշում²⁶: Իսկ Պետրոմայի միջազգային հարցերի հանձնաժողովի փոխնախագահ Ն. Ստոյարովը հայտարարել էր. «Կարող ենք և պետք է ընդունենք, որ մեր պետական քաղաքականությունը կասպիական տարածաշրջանում սխալ էր: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ այն ինքնուրույն էր, այլև միակողմանի, անհետևողական, ոչ խորքային և անիրատեսական: Երկար ժամանակ պնդելով հնացած իրավական կարգավիճակի հարցը՝ խոչընդոտում էինք նոր պետությունների և ձեռներեցների գործնական նպատակները: Այդ պատճառով նախկին խորհրդային հանրապետություններին դժվար չէր տրամադրել մեր դեմ»²⁷:

2000թ. Վլ. Պուտինի՝ Ռուսաստանի նախագահ դառնալուց հետո Կասպից ծովի կարգավիճակի հարցում այդ երկրի քաղաքականության մեջ տեղի ունեցան էական փոփոխություններ: Այդ վարչակազմը կասպյան տարածաշրջանը հայտարարեց որպես Ռուսաստանի առանձնահատուկ շահերի գոտի²⁸, որոնք ապահովելու նպատակով

²¹ Տե՛ս **К. С. Гаджиев**, նշվ. աշխ., էջ 404:

²² Տե՛ս **Г. К. Войтоповский**, *Море проблем*, М., 2001, էջ 122:

²³ Տե՛ս **Abbas Maleki**, *The Caspian Sea coordination in face of challenges*, "Central Asia and the Caucasus review", Winter 2003, № 40, էջ 42:

²⁴ Տե՛ս Interfax Agency-March 28, 1998:

²⁵ Տե՛ս The Rvestia Newspaper-April 1, 1998:

²⁶ Տե՛ս "Геополитика каспийского региона", էջ 71:

²⁷ Նույն տեղում, էջ 79:

²⁸ Տե՛ս **М. Gasanov**, *The Caspian and the Caucasus in Russia's Geopolitical interests: Historical Aspects//Central Asia and the Caucasus.- Center for Social and Political Studies Sweden. 2005, № 1(31). էջ 73:*

2000թ. ապրիլի 21-ին Ռուսաստանի Անվտանգության խորհրդի որոշմամբ հիմնվեց Կասպից ծովի հարցով նախագահի հատուկ ներկայացուցչի ինստիտուտը²⁹: Հատուկ ներկայացուցիչ նշանակված Վիկտոր Կալյուժնին մերձկասպյան հանրապետություններում շրջազայելուց հետո ներկայացրեց ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ Ռուսաստանի նոր առաջարկությունները³⁰: Մասնավորապես առաջարկվում էր որդեգրել Կասպից ծովի խնդրի լուծման այսպես կոչված «փուլային տարբերակ»: Այդ առաջարկի էությունն այն էր, որ Կասպից ծովի հատակը բաժանվի ազգային հատվածների, իսկ ջրային մակերեսն ընդհանուր լինի բոլոր կողմերի համար: Ինչ վերաբերում է վիճելի հանքավայրերի շահագործմանը, ապա առաջարկվում էր օգտագործել հիսուն-հիսուն տարբերակը: Կասպից ծովի հարցով Ռուսաստանի նախագահի հատուկ ներկայացուցիչ Վ. Կալյուժնիի խոսքով, «եթե այդ սխեման ընդունվի, ապա միջին գծի խնդիրը կլուծվի ինքնաբերաբար»³¹:

2001թ. հունվարի 9-ին Վ. Պուտինի՝ Բաքու այցի ընթացքում Ռուսաստանի և Ադրբեջանի նախագահները հանդես եկան Կասպից ծովում համագործակցելու միասնական հուշագրով³²: Կողմերը կարծիք հայտնեցին, որ Կասպից ծովի բաժանումը առաջին հերթին մերձկասպյան չորս պետությունների խնդիրն է, ինչը ԽՍՀՄ փլուզման անմիջական հետևանք է: Նման մոտեցումը ենթադրում էր, որ ծովը կբաժանվի նախկին միութենական հանրապետությունների միջև, իսկ Իրանը մնում է մեկուսի և խաղից արտա վիճակում: Սակայն Թուրքմենստանը համաձայն չէր այդ հարցը լուծել առանց Իրանի:

2002 թ. ապրիլին տեղի ունեցավ մերձկասպյան հինգ հանրապետությունների առաջին գագաթաժողովը, որտեղ Ռուսաստանը, Վազախստանը և Ադրբեջանը հանդես եկան միասնական դիրքորոշմամբ, այն է՝ բաժանել Կասպից ծովի ընդերքը՝ ջրային զանգվածը թողնելով ընդհանուր բոլորի համար: Սակայն հանդիպման ընթացքում ԻԻՀ նախագահ Մուհամադ Խաթամին նշեց, որ Իրանն ընդունում է Կասպից ծովը ազգային հատվածների բաժանելու սկզբունքը, պայմանով, որ բաժանումը կատարվի հավասարության սկզբունքով՝ յուրաքանչյուր ափամերձ պետությանը տրամադրելով ծովի 20%-ը³³: Իրանի այդ դիրքորոշման հետևանքով կողմերի միջև միասնական փաստաթուղթ այդպես էլ չստորագրվեց:

2003թ. փետրվարի 27-28-ը Բաքվում տեղի ունեցավ մշտական աշխատանքային խմբի հերթական հանդիպումը Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի նախագիծ կազմելու նպատակով: Բազմակողմ բանակցությունների ընթացքում Իրանը շարունակեց պնդել Կասպից ծովը հավասար հատվածների բաժանելու իր տեսակետը, ինչը ծովի իրավական կարգավիճակի շուրջ ամբողջական պայմանագրի ստորագրման հիմնական խոչընդոտն էր: Այսպիսով, սկզբունքային հարցերում ափամերձ չորս պետությունների համաձայնության հետևանքով Իրանը հայտնվեց մեկուսացած վիճակում:

2004թ. ապրիլի 6-ին Մոսկվայում տեղի ունեցավ մերձկասպյան հանրապետությունների արտաքին գործերի նախարարների խորհրդակցություն, որի նպատակն էր մշակել Կասպից ծովի իրավական կարգավիճակի վերաբերյալ կոնվենցիայի տեքստի նախագիծը³⁴: Սակայն պարզվեց, որ մասնակիցների մոտեցումներում նախկինի պես տարածայնություններ կան:

²⁹ St' u Bahman Aghai Diba, նշվ. աշխ., էջ 181:

³⁰ St' u Myca Aлы Pеза Baxиди, նշվ. աշխ., էջ 57:

³¹ "Геополитика каспийского региона", с. 8.

³² St' u B. Гинзбург, Раздел ресурсов Каспийского моря, участники, интересы, проблемы, "Центральная Азия и Кавказ", 2003, № 5(29), էջ 174:

³³ St' u Bahman Aghai Diba, նշվ. աշխ., էջ 265:

³⁴ St' u "Независимая газета", 07.04.2004:

Այսպիսով, կարելի է անվարան ասել, որ Կասպից ծովի բաժանման և նրա նոր իրավական կարգավիճակի հարցերը կարող էին առաջ չբաշխվել, եթե չլինեին նրա հսկայական ածխաջրածնային պաշարները, որոնք Ռուսաստանին, ինչպես նաև մերձկասպյան մյուս պետություններին կանգնեցրել են լուրջ խնդիրների առաջ:

М. М. АБРААМЯН — *Позиция Российской Федерации в отношении правового статуса Каспийского моря (1991-2004гг.)*. — Планы России по сохранению своего влияния на Каспии посредством закрепления прежнего правового статуса шли вразрез с политикой прикаспийских государств, которые стремились освободиться от российской опеки. Несмотря на неудачу, Россия не оставляла попыток внести определенность в правовой статус Каспия. Россия с самого начала выступала против раздела Каспийского моря на национальные секторы. Так, в 1995 году на совещании в Тегеране Россия представила свой проект соглашения, базировавшийся на той идее, что Каспий — общее достояние.

В результате предложение России не было поддержано всеми прикаспийскими странами, что вынудило ее снова искать компромиссный вариант со странами региона. Суть согласованного подхода России, Казахстана и Азербайджана состоит в том, что дно делимо, а вода общая. Но они так и не пришли к единому мнению, так как главной противоборствующей стороной является Иран.